



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

208.2
U-96

1045

200
382-U1

2.0.1.

ՏԵՂՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Սակայն առաջին առաջարկը կ լինի
առաջ. օր. Մարտին Մարտինիկից՝ ի պահու

200
382-ԱՊ

~~200~~
~~382-ՕՀՀ~~
200
382-ԱՊ

Եթե մասնաւոր է այս գործը

2010



Սէրբն. «Ողջոյն Զեղ»: Գալով սուրբ Էջմիածնէն,
Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ ընդհանուր
վարչութեան կեդրոնէն, ողջոյն—ողջութիւն կմալ-
թեմ Զեղ. անթերի լինել ձեր կեանքում: Քրիս-
տոնէական հոգևոր կենաց շաւիղներում: Ողջոյն
կրերեմ Զեղ և Մայր Աթոռոյ Գահակալէն—Սլր-
բազնագոյն Կաթողիկոսէն ամենայն Հայոց, նոյնպէս
և Մայր Աթոռոյն սպասաւորող Միաբանութենէն.
որ ջերմեռանդն սիրով ողջոյն և օրհնութիւն կցան-
կանան Զեղ և համայն ժողովրդոցն Հայոց՝ իւրեանց
մշտնջենաւոր աղօթքներումն:

Կողջունեմ զԶեղ իբրև մի ծանօթ ժողովուրդ,
համակրելով Զեր հոգւոյ բաղձանքներուն: Բագուի
Մարդասիրական ընկերութեան միջնորդական մի
նամական իմացայ ձեր հոգեկան վիճակն, և թէ
ի՞նչպէս կցանկայք Աստուծոյ խօսքերն լսելու: Մայր
Աթոռոյն կարգագրութեամբն խրկուեցայ, որ ձեր
փափագը լեցնեմ, խօսելով ձեր ականջին՝ Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի երկնային վարդապետու-
թեան խօսքերն: Աստուծոյ խօստացած սուրբ Հոգ-
ոյն շնորհացն ապաւինած, ամենայն սիրով փու-
թացայ եկայ, և նոյն սիրով կջանամ ձեր մէջ:

Դուք ևս միաբան աղօթք արէք, որ Աստուած տայ լիսպէս իւր Հոգւոյն շնորհքէն, և կարողացնէ աղքերացնել ձեր ունկնդրութեան առաջ սուրբ Աւետարանի կենաց բանին աղքիւրն, և դուք՝ յագեցնէք ձեր ծարաւն Ճաշակելով փրկչին քարողած կենաց Ճաշակն, և խմելով նորա կենաց աղքիւրէն, որ կրթի ի կեանսն յաւիտենից. Հաւատով և միամըտութեամբ սրտի ունկնդիր եղէք սուրբ Աւետարանի խօսքերուն, զ ո կվարդամ. և կթարդմանեմ ձեր լսելոյն համեմատ՝ հանդերձ բացատրութեամբ ծածուկ իմաստից սուրբ Աւետարանին. սկսելով Տեառն մերոյ անապատի փորձութիւններէն, և Կազարէթում խօսած առաջին քարողէն:

ԸՆԹԵՐՑՈՒՄԾ ՍՈՒՐԲ ԱՒԵՏԱՐԱՆԻ՝ ՈՐ ՀԱՏ ՂՈՒԿԱԾՈՒ. Գ. 1—30:

«1. Եւ Յիսուս լի՛ հոգւով սրբով գարձաւ ի Յորդանանէ. և վարէք հոգւովն յանապատ. 2. Աւուրսքառասուն փորձեալ ի սատանայէ. և ոչ եկեր. և ոչ արբ յաւուրսն յայնոսիկ, և ի կատարելն նոցա՝ քաղցեաւ. 3. Եւ ասէ ցնա սատանայ. Եթէ որդի ես Աստուածոյ, ասա քարիդ այդմիկ, զի հաց լիցի: 4. Պատասխանի ետ նմա Յիսուս, և ասէ. գրեալ է. «Եթէ ոչ հացիւ մի:

ցէ մարդ, այլ ամենայն բանիւ Աստուածոյ»: 5. Եւ հանեալ զնա ի լեառն մի քարձր, եցոյց նմա զամենայն թագաւորութիւնս աշխարհի ի վայրկեան ժամանակի: 6. Եւ ասէ ցնա սատանայ. քեզ տաց զայս ամենայն իշխանութիւն և զիառս ոոցա, զի ինձ տուեալ է. և ում՝ կամիմ տամ զսա: 7. Արդ՝ դուեթէ անկեալ երկիր պագանիցես առաջի իմ, քեզ եղիցի ամենայն: 8. Պատասխանի ետ նմա Յիսուս, և ասէ. զրեալ է. «Երկիրագագես Տեառն Աստուածոյ քում», և զնա միայն պաշտեսցես»: Եւ ած զնա յերուսաղէմ, և կացոյց ի վերայ աշտարակի տաճարին, և ասէ ցնա. Եթէ որդի ես Աստուածոյ, արկ զքեզ աստի ի վայր: 10. Զի գրեալ է. Եթէ «Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վասն քո, պահել զքեզ: 11. զի ի վերայ ձեւաց բարձցեն զքեզ, մի երբէք հարցես զքարի զոտն քո»: 12. Պատասխանի ետ նմա Յիսուս, և ասէ. ասացեալ է. թէ «ոչ փորձեսցես զնէք Աստուած քո»: 13. Եւ կատարեալ զամենայն փորձութիւնս սատանայի, ի բոց եկաց ի նմանէ առ ժամանակ մի:

« 14. Եւ գարձաւ Ցիսուս զօրութեամբ Հոգւոյն ի Գալիլեա. և ել համբաւ զնմանէ ընդ ամենայն կողմանս գաւառին։ 15. Եւ նա ուսուցանէր ի ժողովուրդս նոցա՝ փառաւորեալ յամենեցունց։ 16. Եւ եկն ի Նազարէթ՝ ուր սնեալն էր. և եմուտ ըստ սովորութեան իւրում՝ յաւուր շարաթու ի ժողովուրդն։ 17. Եւ ետուն նմա գիրս զԵսայեայ մարգարէի, և յարեաւ ընթեռնուլ. և իբրեւ երաց զգիրսն, եգիտ զայն տեղի՝ յորում գրեալն էր. 18. « Հոգի Տեառըն ի վերայ իմ՝ վասն որոյ և օծ իսկ զիս. աւետարանել աղքատաց առաքեաց զիս, ըժշկել զբեկեալս սրտիւ, 19. քարոզել գերեաց զթողութիւն, և կուրաց տեսանել, արձակել զվիրաւորս ի թողութիւն. քարոզել զտարեկան Տեառն ընդունելի»։ 20. Եւ խփեալ զգիրս, ետ ցպաշտօնեայն, և նըստաւ։ Եւ ամենեցուն՝ որ ի ժողովրդեանն էին աչք ի նա հայէին։ 21. Եւ սկսաւ ասել ցնոսա. Այսօր լցան գիրքս այս յականջս ձեր։ 22. Եւ ամենեքին վկայէին նմա. և զարմանային ընդ բանս շնորհացն՝ որ ելանէին ի բերանոյ նորա, և ասէին. ոչ սա է որ-

գին Ցովսէ փայ։ 23. Եւ ասէ ցնոսա. ապաքէն ասիցէք առ իս զառակս զայս. ըժիշկ, ըժշկեա զանձն քո։ Որչափ լուաք՝ զոր արարեր ի Կափառնաում; արա և աստ իքում գաւառի։ 24. Եւ ասէ. ամէն ասեմ ձեզ. թէ չէ մարգարէ ընդունլի ի քաղաքի իւրում։ 25. Արդարեւ ասեմ ձեզ. զի բազում այրիք էին յաւուրս Եղիտիք ի մէջ Իսրայէլի, յորժամ փակեցաւ Երկինք զերիս ամս և զվեց ամիս, և եզեւ սով մեծ ընդ ամենայն Երկիր. 26. և ոչ առ մի ի նոցանէ առաքեցաւ Եղիա, բայց միայն ի Սարեվիթայ Սիդովնացւոց՝ առ կին մի այրի։ 27. Եւ բազում բորոտք էին յիսրայէլի առ Եղիսէիւ մարգարէիւ, և ոչ ոք ի նոցանէ սրբեցաւ, բայց միայն Նէեման ասորի։ 28. Եւ լցան ամենեքին բարկութեամբ ի ժողովրդեանն՝ իբրեւ լսէին զայս. 29. և յարուցեալ հանին զնա տրտաքոյ քաղաքին, և ածին զնա մինչեւ յարտեան լերինն՝ յորոյ վերայ քաղաքն նոցա շինեալ էր, գահավէժ առնել զնա։ 30. Եւ նա անցեալ ընդ մէջ նոցա գնայր»։ Եթէ իբրեւ հայ ժողովուրդ՝ հասկանայիք այս բուն հայերէն լեզուն՝ որով սուրբ Եւետարանը

գրուած է, և տարւոյն ամեն օրելրումն հատուած հկարդացուին ձեր ականջին, եթէ հասկանայիք այս բուն հայերէն լեզուն, սուրբ աւետարանի այս հոգիէն պիտի ընդունէիք, և հետզհետէ կատարեալ պիտի լինէիք: Բայց որովհետև մեր աղդին կարդ մի հանրական պակասութեանց և կարօտութեան պատճառաւ՝ դուք ևս չեք հասկանար այս լեզուն՝ որ մերն է, և ոչ օտարու այժմն հարկ է իմ վերայ: Որ թարգմանեմ ձեր ականջին այս աւետարանը՝ տուն տուն, և իւրաքանչիւր տան թարգմանութեան հետ՝ բացատրեմ ձեզ, թէ Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ գործերումն ու խօսքերումն ինչընդհանուր բարիք կդրուին քրիստոնեայ ժողովրդեան:

Որպէս զի արժանապէս հաղորդ լինիք այն աստուածային բարեաց, կատարեալ մտադրութեամբ և միամիտ հաւատով ականջ դրէք:

« 1. Յիսուս՝ հոգու-ոյ որբու-լուսու-ծ՝ Յուրաքանչին դուր-
յուն, և նոյն հոգու-ոյ իշխու-եր դեռ է յանուալուր, 2. +
առանձուն որ սուպունացին գոյնու-ել էր. և այն օրեւու-ն ոչ
էլետու և ոչ իմէց. և երբ առանձուն օրն լինալու վե-
րայ. էր՝ +աղջեւու»:

Սուրբ Աւետարանի այս հատուածումն ծածկուած իմաստն այս է. Տէրն մեր Յիսուս Քրիստոս—մարդացեալ փրկիչն՝ իւր գործովն օրինակ տուաւ, թէ կատարեալ մարդն ինչպէս պիտի կատարէ այս աշխարհի կեանքումն՝ Աստուծոյ սահմանած արդարու-

թիւնը. վասն որոյ և առաջի անդամ գնաց Յորդանան, և Յովհաննէս Մկրտչի քարոզած ապաշխարութեան մկրտութիւնը մկրտուեցաւ: Մարդիկ այս աշխարհի կենաց ոչնչութիւնն ու մահն տեսնելով պիտի զգան, թէ կորուսել են Աստուծոյ սահմանած անմահութիւնն, և այս կորստեան վերայ ապաշտելով, պիտի հետեւին, որ անմահութիւնը գտնեն վերստին: Այս ապաշխարութեան կատարումն է մկրտութիւնն, որով կմկրտէր Յովհաննէս: Մարդացեալ փրկիչն իրեւ մարդկան օրինակ տալ ընդունեց այս մկրտութիւնը. յորում Աստուած յայտնեց իւր սիրելի որդին, և Հոգին սուրբ յայտնուեցաւ, թէ Յիսուսի մկրտութիւնը մկրտուողին վերայ պիտի հանգչի. և նորա մէջ պիտի բնակի և Աստուծոյ մարդարէն—Յովհաննէս մկրտիչ՝ իւր աշակերտներուն ցոյց տուաւ, « Ահա գառն Աստուծոյ »:

Եւ ապա Հոգւով սրբով լցուած, Յորդանանէն գարձաւ. և նոյն Հոգւոյն զօրութեամբ գէպ ի անապատն—մարդ չընակած տեղեր գնաց, առանձնացաւ: Այս անապատական առանձնութիւնը՝ մարդուս խօրհներէն կարբէ, աշխարհիս աւելորդաց ցանկութիւններէն կրամնէ, մարմնական ցանկութեանց վարագոյն՝ հոգւոյն տեսութեան առջևէն կվերցնէ, և հոգեւոր կեանքը պարզապէս տեսանելի կանէ. մարդ՝ այս հոգեկան տեսութեամբ միայն կարող է տեսնել և ճանաչել թէ քանի՛ առաւել

է հոգւոյն կեանքն քան զկեանքն մարմնոյն։ Մարդացեալ փրկիչն որ Աստուած էր՝ ինքն պէտք չունէր այս անապատական առանձնութեան։ այլ իրեւ մարդ՝ օրինակ տուաւ իւր անձին օրինակաւ։ թէ մարդիկ պէտք է նախ սրբեն իրենց սիրտն ու միտքն աշխարհիս աւելորդ փառքերու փառասիրութենէն։ և մարմնական ցանկութեանց յօժարութենէն։ որպէս զի կարողանան հոգւով տեսնել Աստուծոյ լոյսն, և նցյն լուսովն ու տեսութեամբ կարողանան ճշմարիտ բարին ընտրել, և խնդրել և գտնել։

Ըստ որում Աստուծոյ հաջոյքն փնտոող մարդիկ միշտ աղատ չեն սատանայի փորձանքներէն, մարդացեալ փրկիչը՝ թոյլ տուաւ սատանային, որ իւր փորձութիւններովն փորձէ և փրկչին մարդկութիւնը։ Այս թօյլտուութիւնն արաւ, որպէս զի անձին օրինակովն սորվեցնէ մարդկան, թէ ինչպէս կարելի է յաղթել սատանայի փորձանքներին, եթէ երբէք պատահին որևիցէ քրիստոնէի։ Այս թօյլտուութիւնն արաւ սատանային քառասուն օր ծոյմ պահելէ ետքն քաղցինալովը՝ քառասուն օր ոչինչ չուտել և ոչինչ չխմել և ազա զգալ, թէ քաղցած է։ մարդկային կենաց ամենագառն փորձանքն է այս, և այս միջոցին սատանան կմօտենայ և իւր փորձութիւնն կսկսի այսպէս։

« 5. Աստուածան առաջ տեսր, եթէ Աստուծոյ որդէ՛ է, ասո՞ւ այդ ժողովը, որ հաց լինի։ 4. Յիսուս պատրաստիած պատուած տեսր, և առաջ դրուած է։ — թէ մորդ մոց»

հայով լապրէր, այլ Աստուծոյ բոլոր իսունվն—»։

Այս տեղ սատանայի առաջարկութիւնն՝ մի թեթև խօսք կերպի, եթէ վեր ի վերս նայինք բայց Յիսուս փրկիչ կմերժէ զայն, և ցոյց կուտայ օրինաց այն խօսքը թէ կապրին մարդիկ և Աստուծոյ խօսքովն։ Փրկչին այս պատասխանովն ամօթահար կլինի սատանան, տեսնելով, որ մարդ կապրի Աստուծոյ խնամքովն։ և ամենագառն քաղցածութեան միջոցումն ևս Աստուծոյ խնամոց վերայ յոյս դրած է, և կազմառի քաղցի տառապանքէն։ Մարդկան այժմու կենցաղավարութեան շատ օրինակներումն կտեսնենք, որ մարդիկ քաղցի փորձանքն անցունելու համար՝ շատ անդամ իրենց հասկացողութեան և համոզման հակառակ գործելով կմեղանչեն, որ նշան է, թէ հաւատք չունին Աստուծոյ ամենախընամ զօրութեան վերայ, չեն հաւատար, թէ Աստուած է, որ կկերակրէ բոլոր արարածներն։ Կտեսնենք և շատ մարդիկ, որ շատ տարիներու բաւականանալու ապրանք և հարստութիւն ունին, և գարձեալ կջանան աւելցնել։ և այս՝ այնպիսի ճանապարհով, որ յայտնի գիտեն, թէ մեղաց ճանապարհ է։ կղրկին աղքատներն, կհարստահարեն տկարներն, կյափշտակեն որբին իրաւունքը, կիսարեն արդէներն, կիսարդախեն իրենց վաճառած ապրանքը, կիսարդախեն կշիռքը, մեծ չափով կառնուն, փոքր չափով կհատուցանեն, ամենատեսակ զրկանք կդորժածէն, որպէս զի հարստանան, և երբէք քաղցի

Նեղութեան և կամ աղքատութեան չպատահին,
այս ամենը կանեն մարդիկ՝ լստ որում չեն տես-
ներ Աստուծոյ ընդհանուր խնամքն. չեն զգար
թէ Աստուած է, որ բոլոր արարածները կը կերա-
կրէ. չեն իմանար, թէ Աստուած սահմանել է բնու-
թեան օրէնքն. և կկառավարէ. և այն օրինաց հա-
մեմատ կաճի ամեն կերակուր ամեն տարի և ամեն
ժամանակ՝ նոր և թարմ բոլըրովին, և յարմար ա-
մենայն արարածոց մննդին. Մարդկային կենաց մէջ
մարմնական յօժարութեանց սաստկանալուն պատ-
ճառաւան՝ հոգեկան տեսութիւնն այնչափ տկարա-
ցած էր, որ մինչև անգամ Խորայէլացիք՝ Աստուծոյ
մեծամեծ պանչելեքն այն ինչ ազատած Փարաւոնի
գերութենէն, չէին կարողանար հաւատալ, թէ Ա-
զատիչ Աստուածն՝ կերակուր ևս կուտայ. վասնորոյ
և Մովսէսի գէմ կտրտնջէին, թէ հաց չունենք,
անապատումն քաղցած մեռնելէն լաւ էր, որ եղիպ-
տական գերութեան հացն ուտէինք. Խորայէլի այս
տրտունջը լսող արարիչ Աստուածն էր, որ քիչ օ-
րեր յառաջ լսել էր այս ժողովրդեան աղաղակն՝
իրենց բռնաւորի երեսէն, և ազատել էր այն գե-
րութեան լուծէն սպանչելի զօրութեամբ. այնպէս
որ տկար և գերի ժողովուրդն առանց մի կաթիլ
արեան ապրեցաւ զօրաւոր թշնամւոյն զէնքերէն.
իսկ սպառազինեալ թշնամին՝ իւր ահագին զօրու-
թեամբն՝ տկարացաւ Աստուծոյ բարձր բազկին տակ
և խորտակեցաւ. Աստուծոյ սպանչելի զօրութեան

այս խնամքը վայելող Խորայէլն անգամ՝ քիչ օրեր
ետքն երբ սկսեց տեսնել. թէ այլ ևս իւր պաշարն
հատնելու վերայ է, տրտնջեց Աստուծոյ գէմ, թէ
քաղցած է. Խորայէլի հացը գեռ ևս սպառած չէր
և այսպէս կտրտնջէր. Ամենախինամն Աստուած՝ դար-
ձեալ ցոյց տուաւ իւր կերակրիչ զօրութիւնն ու
երկնքէն հաց տեղաց նոցա. ո՛չ մի օր կամ երկու
օր, այլ ամբողջ քառասուն տարի, քանի որ նոքա
անբեր անապատումն կթափառէին. նոյն քառա-
սուն տարիներումն՝ շատ անգամ բարկացուցին զԱս-
տուած. բայց Աստուած մանանայի տեղալն չգաղ-
թեցուց, թէպէտ և կպատմէր ուրիշ խրատիչ ե-
ղանակներով. Այսպէս սորվեցուցած էր Աստուած՝
Խորայէլի փրկութեան միջոցին՝ թէ Մորդ մոյն հա-
յուն շապէր, ոյլ Աստուածոյ խօսունն, ամէն խօսունն:

Աստուծոյ օրինաց այս կերակրիչ զօրութիւնը մէջ
կրերէ մարդացեալն Յիսուս, և կմերժէ սատանայի
առաջարկութիւնն, որ զԱստուած փորձել է. Այս-
պէս անձին օրինակաւ կսորվեցնէ փրկիչն, որ քաղ-
ցածութեան ամենագառն միջոցումն ևս հաւատանք
Աստուծոյ խօսքին, և ապրենք քաղցի վտանգէն, ու
չփորձենք զԱստուած, ինչպէս որ սատանան կթե-
լադրէ. Սատանային յաղթեց Յիսուս այս առաջին
փորձութեան մէջ, բայց սատանան յետ չկեցաւ
իւր փորձութենէն, և շարունակեց.

« Յ. Բորջը լեռ մէ հոնեց զՅ հոսու, և զոյքինոտին
ժորանուում՝ ունուորին բոլոր նորուորունները ցոյց

տնոր, 6. և առաջ անոր՝ Սադանոն, իւլ հունվար այս տվյալն էլքունութիւնն ու առաջ գտնուն, ու ինչ պրուած է. և ա՛մ իսկի՞ց իւրաքանչ զայը, 7. Այժմ դու ենք երիբութեանիւն անես ի՞մ առաջ, ամեն աւ իւլ լինի: 8. Յիսուս պատրութիւն առաջ անոր, և առաջ գրաւած է, «Ք» Տէր Ա. որութայդ միայն երիբութեանիւն անես, և զայ միայն պաշտեւն»:

Հացի կարօտութիւն չունեցող մարդիկն ընդհանրապէս իշխանութիւն կսիրեն, և այս սէրն յագուրդ չունի, կցանկանայ թագաւորութեան, տիեզերակալութեան, մինչև իսկ երկրպագուներ կփնտռէ: Սատանան տեսաւ, որ չկրցաւ խարել զՅիսուս քաղցածութեան գիպուտածումն, կփորձէ խարել իշխանասիրութեան փորձանքում: Ացուցնէ բոլոր աշխարհի թագաւորութիւններն ու նոցա փառքն, և կիսուտանայ Յիսուսին տալ, եթէ երկրպագութիւն անէ նորա առաջ: Աշխարհի մարդիկն՝ իշխանութեան կհասնին այս ճանապարհով այսինքն՝ իշխանութիւն տուողին երկրպագելով: Փրկիչը կմերժէ այս ամեն իշխանութիւնն ու նոցա փառքերն, դարձեալ Աստուծոյ օրինաց մի խօսքը մէջ բերելով:

«Ք» տէր Ա. որութայդ երիբութեանիւն անես, և զայ միայն պաշտեւն»: Այսպէս կուսուցանէ իշխանութիւն սիրողներուն, թէ Աստուծոյ խօսքը պահելով միայն կարելի է չխարուել իշխանասիրութեան և փառասիրութեան փորձանքներումն:

9. Ես յետուողէ բերու զնո, և առաջիկ աշուրու-

ին վերոյ իշխանուցուց, և առաջ անոր. Ենի՛ Աստուծոյ որդէն ես, այս տեղէն վար յիշէ զեւ 10. ու իրուած է, «Ենի՛ իւղ համար պատրութիւն է եւր հըշտութիւններուն, որ պահէն զեւդ, 11. յեւդէ վերոյ պէտի վերցնէն զիւդ, որ որդէր ուորէ նշունեն: 12. Յիսուս պատրութիւն առաջ անոր, և առաջ անոր է, ին ու Տէր Ա. որութանձը ւիրը յեւ: 13. Սադանոն այս տվյալ փորձանիւններն իւրաքանչ եր. և մի առ շամասի մէկի իւցու անորմէն»:

Յիսուս փրկիչ յաղթեց սատանային՝ հացի կարօտութեան փորձանքումն. յաղթեց նոյնպէս և իշխանասիրութեան ու փառասիրութեան փորձանքումն: Մնացել էր մի փորձութիւն ևս, այն է՝ Աստուծոյ հաճոյքը փորձել, Աստուծոյ խօստամունքը փորձել տալ, թէ կկատարուի՞ արդեօք: Աստուծոյ խօսքերուն հաւատացող աստուծապաշտներկայութիւն չունենար Աստուծոյ խօստամանց կատարուելուն, բայց սատանան՝ որ հակառակ է աստուծապաշտին՝ երկմատութիւն կձգէ նորա սրտումն, և փորձել կառաջարկէ: Այսպիսի սատանայական փորձանքում՝ Տիրոջ օրինակն յիշելու է. և նորա օրինակն հետեւելով, այսինքն Աստուծոյ խօսքն յիշելով, սատանային մերժելու է: Ճշմարիտ աստուծապաշտին հոգին արթուն կլինի, և հաղորդ Աստուծոյ լուսոյն, նա համարձակ կտեսնէ Աստուծոյ իննամքը, մեծութիւնը, և անզեղջ բարերարութիւնը. և երբէք չերկմտիր Աստուծոյ օրինաց խօսքերուն վերայ, և կյաղթէ ամեն սատանայական փոր-

ձանկներումն, ինչպէս որ օրինակով սորվեցուց Յի-
սուս փրկիչը և սատանան հեռի կեցաւ անորմէ:

« 14. Եւ Յիսուս՝ Հոդոյն զբութեամբը Գուլեւոյ Դար-
յան. և բառառի ամեն հովերն համբառ քնոց նորո մա-
սնին: 15. Եւ նու հուրվեցներ նոցո ժողովարաններուան,
և ամենին գործարուած: 16. Եւ եկաւ նոշարելի ուր
որ մեծացել էր. և եւր սովորութեան համարու՝ շաբան
օրը ժողովարուը մուտքած էր: 17. Եւ ետոյի մուրբութին էիր ուր
պատճն անոր. և ելու հանդնեցաւ, որ իարդոյ, և երբ
բացաւ, այն ուշաց դրուտ: յորուած դրուտն էր: 18. «Տե-
րոջ Հոդին էմ վլրոյ է, որուած համար և օձեց զիս իւր-
ից զիս, որ աղոտուներուած տաւուրունեւ՝ տաւուրուն ուր,
որուածեները բնչեմ, 19. Գլըներուան նոշութիւն +
ուրոյին, և իյրերուան՝ աենաւլ ուրովէմ, զիրաւորներն ուր-
յակէմ և նոշութիւն, Տերոջ ընդունելի առուելուը ուրու-
վէմ»: 20. Եւ էիր ու իւրել՝ պաշտօնին պատաստ, ու
նոյնուած: Եւ ժողովարանաւն եղողներուան ամենին այնէր
անոր ինյոյէն: 21. Եւ ոկտոց առել նոցո, Այս էիր ուր
(դրուտն) այսօր իտարուեցաւ յէր ակնաներուան»:

Յիսուս անապատի քառասնօրեայ ծոմապահու-
թենէն ետքն՝ սատանայի փորձութիւններուն յաղ-
թած, Գալիլեա կուգայ Հոգւոյն զօրութեամբ: Կա-
փառնառում քաղաքում կքարոզէ, թէ Աստուծոյ
թագաւորութիւնը մօտեցել է, կսորվեցնէ, թէ ինչ-
պէս պիտի ընդունեն արքայութեան աւետարանն.
և ըստ այնմ կգործէ: Յիսուսի քարոզութեան և
կատարած սքանչելեաց համբաւն՝ կտարածուի և

դաւառի շրջակայ լեռներն: Յիսուսի քարոզութեան
ժամանակն՝ արդէն իսկ Պանիէլ մարդարէի գուշա-
կած եօթներորդներու լրման օրերումն էր, և Հրէ-
ից մէջ մեծ ակնկալութեամբ կսպասէին, թէ մի
կողմէ պիտի յայտնուի Աստուծոյ օծեալը, զոր
իրիկէ խոստացած է Աստուծած մարդարէից բերա-
նով, և որ պիտի գայ ու Պաւմի թագաւորութիւնը
վերականգնէ: Հրէից այս ակնկալութիւնն այնչափ
ընդհանրացած էր, որ շատերն արդէն կընգունէին,
թէ Յովչաննէս է խոստացեալ Մեսիայն: Հրէից
ակնկալութեան սաստկութեան չափովն՝ արագ հըռ-
չակուեցաւ Յիսուսի քարոզած արքայութեան համ-
բաւն, նոյնպէս և գործած սքանչելեաց համբաւն, և
ամենքը կփառաւորէին զՅիսուս:

Կափառնառումէն ելաւ, նազարէթ եկաւ, ուր որ
մեծացել էր մանկութեան օրերումն, և շաբաթ
օրը ժողովարանը մտաւ, որ սորվեցնէ, ինչպէս որ
միւս գիւղերումն կուսուցանէր: Կըբանայ Խսայի
մարդարէի գիլըն, մի գլուխ կկարդայ, և կնստի,
կը խօսի, ամենքը նորան կնային և կզարմանան: Ա-
ւետարանիչը մարդարէի գլուխէն մէջ բերած հա-
տուածին անմիջապէս կկցէ Յիսուսի վերջին խօսքն
թէ Այս էիր ու իտարուեցաւ այսօր յէր ակնաներուան:
և զանց կանէ դնել թէ ինչպէս կատարումն տուաւ
Յիսուս մարդարէի այն գրուածքին:

Մարդարէի գրքէն մէջ բերած գլուխն՝ եօթն հա-
տուածներու կրաժանուի ըստ այսմ:

ա. «Տէրող Հոդին իմ զերայ ե, որուան համար և օծեց զի՞ն:
բ. «Զի՞ իրից, «ո ապառաներուն առելին պար:»
տ. » » «ո սրբաբեները բժշկեմ:»
չ. » » «ո քերերուն նողութեան ուրողեմ:»
զ. » » «ո հոյրերուն ուեռել + արողեմ:»
ե. » » «ո զիւտուրեն ի նողութեան արագիւմ:»
ա. » » «ո Տէրոջն ընդառելի պարեխանը + արողեմ:»:

Եսայի մարդարէի գուշակութեանց այս եօթն
հատուածներուն՝ կատարումն տուաւ Յիսուս՝ Նա-
զարէթի ժողովարանումն քարոզելով: Առաջին հա-
տուածի կատարումն՝ Աստուծոյ հոգոյն ընդունե-
լութիւնն է, որ յայտնի եղաւ Յիսուսի մկրտութեան
ժամանակ. որուն և Յովհաննէս Մկրտիչ վկայեց,
ասելով:

Ահա սո է Առողջոյ բառան, որ աշխարհի մեջերը
ինքնունեւ: Սո է այն, որուան համար ես իսուսի, իմ եղանեւ
իսուսից մի առքու, որ եմ առաջն անցու, վասն ոչ ինչին
յառաջ եր, եւ ես չեմ չետեր զնու, այլ որպես զի եռտո-
րելին յայտնի լինի, նորս համար եկոյ ես ջուզ մրտելու:
Ահայց Յովհաննէն, և առողջ, թէ իտեռնի Հոքին, որ
առաջնին նորս ինչներ երինեն, և նորս վերոյ ինունիչներ:
Ես ես չեմ չետեր զնու, այլ զի երիուը՝ որ իրից ջուզ
մրտելու, և առողջ ինչ, «որո՞ւ վերոյ որ ուեռնես Հո-
քին, որ ինչ և հանդիւն նորս վերոյ, և ու որ իմբուտ
Հոքունը ոբուժ: Ես ես առողջ, և վերոյ միւն ուսուչ,
իւս սո է Առողջոյ որդին: (Յովհ. Ա. 29. 34).

Հոգւոյն սրբոյ լնդունելութիւնն քարոզեց Յի-
սուս Նազարէթի ժողովարանումն՝ Հոգւոյ մկրտու-
թեան խորհուրդը սրբվեցնելով: Արարչագոր-
ծութեան միջոցումն՝ Աստուծ իւր հոգիէն
փշեց մարդուն երեսը և մարդն եղաւ պատ-
կեր Աստուծոյ: Աստուծոյ Հոգւոյն զօրու-
թեամբ կզգար մարդ և կիմանար. և այս իմաս-
տութիւնը՝ բարձր էր մարդուն մէջ՝ նաև Ադամայ
մեղանչելէն ետքն: Բայց երբ որ Սեթայ որդիկն
ևս Կայենի որդեւոց հետ խառնուեցան, և նոցա բար-
քովն սկսեցին վարել իրենց կեանքն, այն ժամա-
նակն ասաց Աստուծ, «Ի՞մ Հոքին չնայ այդ մորդին
վերոյ յառ-իրեւն, ուրցին լինենուն համար» Ծնն.
Զ. 3: Աստուծոյ այս վճռէն ետքն՝ պակսեց մար-
դիկներէն Աստուծոյ Հոգւոյն իմաստութիւնը, և
մարմական յօժարութեանց միայն կչետեէին, հետ-
զհետէ աւելի ևս վատթարանալով: Այսպէս վատ-
թարութեամբ միայն մարմնոյ ցանկութեանցն հե-
տեւղ ազգը ջնջեց Աստուծ ջրհեղեղով և նոյի
սերունդն օրհնեց: Այս օրհնութենէն ետքն զգաս-
տացան մարդիկ, և զնաւուած կիսնդրէին: Աստուծ
մասնաւորապէս ընտրեց զԱրքահամ, որոյ հաւատ-
քըն մեծ էր, և նորա սերնդեանն առանձին օրէնք
տուաւ, որոցմով իւր հաճոյքը կապունէր, և որով
պիտի իմանային մարդիկ Աստուծոյ առաջնորդ Ամս-
տութիւնը, և պիտի իմարքը անունը առաջնորդ Ամս-
տութիւնը՝ իսրայէլի ժողովարդն՝ բարձրէին առաջնորդ Ամս-
տութիւնը—իսրայէլի ժողովարդն՝ բարձրէին առաջնորդ Ամս-
տութիւնը—իսրայէլի ժողովարդն՝ բարձրէին առաջնորդ Ամս-



Նիւթական աջողութեանց մէջ էին, կատարելապէս չհետեւցան Աստուծոյ Հոգւոյն իմաստութիւնը խնդրելու. բայց երբ աջողութիւննին կորանցուցին, և օտար աշխարհներումն գերութեան գնացին, ըսկընցին փնտռել Աստուծոյ Հոգւոյն իմաստութիւնն. այնչափ ուժգին կը խնդրէին, որ նոցա օրինակէն և հեթանոսներն սկսեցին խնդրել Աստուծոյ Հոգին. Ընդհանուր ազգաց մէջ արթնցած այս ակնկալութիւնն հասաւ ժամանակաց լրումին, և եկաւ որդին Աստուծոյ, լրուց մարդկան մեղքը, և Աստուծոյ Հոգին տուաւ մարդկան, որոնք որ կիսնդրէին. Աստուծոյ Հոգին խնդրողներն պիտի ընդունին զայն մկրտութեամբ ջրոյ և Հոգւոյ. որով Յիսուսի մահուամբ մեռած, թաղուած և յարութեան որդիք կլինին, և կղզենուն Աստուծոյ Հոգին. Թէ Աստուծած, իւր Հոգին պիտի տայ մարդկան, այսպէս կը խոստանայ Յովէլ մարդարէի ձեռքով

« Ե— առիշե երտը՝ պիտի լինի, որ հեղուած ի՞մ հոգին ամեն մարդուն վերոյ, և մարդունքուն յեր ուղարկն և յեր ողջիներն. և յեր ձերերն երդունքը պիտի ուեռնին, և յեր երեսուսութեներն ուերիներ պիտի ուեռնին. Այս օրերը պիտի հեղուած ի՞մ հոգին էն, ի՞մ ժառանքութեռուու և աղախիներուու վերոյ, և պիտի մարդուքուն էն: Ե— նշաններ պիտի ուում վերեն երինուու, և զարն երինուու. և նշաններ պիտի լինին, որին և իրով, և ժուին մըրեն. ու երին և ի խառաւը պիտի ուում, և լուսունն որին, ու լուսունն որին: (Յովէլ. Բ. 28—31):

Այս մարդարէութեան մէջ ակնարկուած նշաններն Փրէին մահուան, թաղման և յարութեան ժամանակը կակնարկեն, որ ժամանակ պիտի հեղու Աստուծած մարդկան վերայ իւր Հոգին:

Թէ Աստուծոյ Հոգին ինչպէս պիտի զգենուն մարդիկ, Երեմիայ մարդարէի ձեռքովն ալ այսպէս կյայտնէ Աստուծած.

« Ահա օրերը հունան՝ իսուտ Տէրը, և նոր սուխու պիտի սոխու գեղ—կորոյելի առնը և Յուդայու առնը. ո՛չ այն սոխուն պիտի՝ զը սոխուցին նոցա հոյելուն հետո՝ որ օրն ու բանեցին նոցա յերածին՝ որ հանեմ երեւուոցուց երեւն. զի նոտ ի՞մ սոխու սոխուցին, և ես սոխուն եղայ նոցա մասին, իսուտ Տէրը: Այս այն օրերն երդին պյու կորոյելի առնն սոխուլիւն՝ սոխու՝ այս եւ սոխու պատճեն իս օրենիները և նոցա մոդելուն, և նոցա որդեռուն պիտի քրեմ այն օրենիներն, նոցա Ա. որուուծ պիտի լինին, և նոտ՝ ի՞մ ժառանքուուրու: Ես այս և ամեն ու ի՞մ ընկերն և երեսուը պիտի շորովցունի, ի՞մ ժառանքի Տէրը զի նոցա իուրելիներն մինչև մէծերն—ումենին ու պիտի ժառանքն պիտի, իսուտ Տէրը: զի նոցա անօրենունիւններուն ուսուց պիտի լինին, և նոցա մեղածը այս և պիտի շահցւու: (Երեմ. Լ. 31—34):

Այս կրկին մարդարէութեանց Ճիշդիմաստին համեմատ քարոզեց Յիսուս, թէ մարդիկ Աստուծոյ Հոգին պիտի ընդունին, և նոր ուխտն ևս պիտի ընդունին իրենց մտքերումն ու սրտերումն, և մեծու փոքր ամենքն ալ ծանօթ պիտի լինին Աստու-

ծոյ հաճոյքներուն։ Սորվեցուց, թէ այս կատարելութիւնն պիտի ստանան մարդիկ, եթէ Աստուծոյ հոգին ընդունին մի անդամ։

Ապա կանցնի նոյն մարդարեկութեան երկրորդ հատուածի կատարմանն, որ է «Զի՞ իբից», «Շոշուներուն աւետի՞ւ բռու»։

Ցիսուս փրկիչ՝ աղքատ կանուանէ այն մարդիկն, որոնք որ հասկացած են թէ Աստուծոյ հոգին ընդունելու կարօտութիւն ունին, և սոսկ աղքատ շանուաներ, այլ հոդով՝ աղքատ իրաւունքներուն անդամներ։ Թէ ինչ աւետեց աղքատներուն, այն յայտնի է Փրկչի ուրիշ խօսքերէն, որ կասէ աղքատներուն, որ են։

«Երանէ աղքատոց հոդով՝ զի նոյն է արտոյունիւն երինց»։

Դարձեալ ուրիշ անդամ իւր աշակերտներուն կուղղէ այս միենցն խօսքն, ասելով՝ «Ուշը վերցուց դեռ աղքատութեն և աղքատ։ Երանէ յեշ հոդով՝ աղքատներուն, զի Արտոյունոյ արտոյունիւնը յերն է։ Երանէ նոյն արտոյուն են այժմ, զի պետք յաբենո՞։» (Մատ. Ե. 3: Առկ. Զ. 20: 21)։

Այս խօսքերուն իմաստովն՝ աղքատներուն աւետիս տուաւ, Հոգով աղքատներուն, թէ նոքա հարուստ են Աստուծոյ արքայութիւնովն։ աւետեց, թէ հոգւոյն կատարելութեան կարօտութիւնն ըգդացով քաղցածներն՝ պիտի յագենան նոյն հոգւոյն չնորդքովն։ Նշնպէս սորվեցուց, թէ աղքատու-

թիւն՝ որ աշխարհասէր ոգւոյ զգացմոնքներումն՝ մի տառապանք է, նոյն աղքատութիւնն՝ հանգիստ է, եթէ Աստուծոյ հոգին ստանան. աղքատութիւնն՝ հոգւոյ զգացմոնքներումն՝ անկարօտութիւն է, և դիւրութիւնն, և թեթեռութիւնն։ Աշխարհասէր աղքատն, աշխարհիս ինչքերուն և պերճութեանցը կցանկայ, իսկ աստուածասէր աղքատն՝ Աստուծոյ խնամքովն մատակարարուած հանապազօր բարիքովն կրաւականանայ, և անկարօտ է բոլորովիմբ։

Փրկիչն՝ ուրիշ մի յորդոր ևս կկարդայ աղքատներուն, որով նոցա հարստանալու ցանկութիւնն՝ երկնային հարստութեան կրարձնէ՝ ասելով՝

«Զե՞ համար երիտ մէջ ժանյեր մի ժանյէտ, «ո՞ր ցեցն առարիճը հաղողականնն, և ժողովը ոչո՞ն իբանո՞ն ո՞ւ ինո՞ւնո՞ն։ Այլ երիշնուոյ ժանյեցէտ յեշ համար ժանյեր, «ո՞ր ու ցեցն առարիճը հաղողականնն, և ոչ ժողովը ոչո՞ն իբանո՞ն ինո՞ւնո՞ն, որուո՞ւ զի ո՞ր ո՞ր յեր ժանյերն են, «որուո՞ւ ի՞տ լոյն ուել լինի։ Մատթ. Զ. 19—21)։

Թէ ինչպէս պիտի գանձեն աղքատներն իրենց դանձերն երկնքում՝ այսպէս կողրվեցնէ.

«Վաստակուցէտ յեր անեցոցնելին, և ուշը հունիւնին պուէտ։ Եյլ համար չնանալով՝ ուսիներ շնուցէտ, ոնպայսու ժոնի երիշնուոյն, «ո՞ր ո՞ր ի՞մունինոյ, և «ո՞ւ ցեցն հաղողինո՞ն»։» (Առկ. Ժ. 33)։ Աղքատներէն, որոնք որ չունէին ոչինչ ստացուածք, որ ողորմութիւն անեն, և ողորմութեան ձանապարհով երկնքում հարստութիւն գանձեն, նոցա ևս կյաւելու ասել.

« Մարգարեն ճըսքն աշն է . ենէ աշդ լուսառար է , բոլոր
հարցինդ լուսառար պիտի լին . ինչ ենէ աշդ վար է ,
բոլոր հարցինդ իստարին պիտի լին » : (Մատթ . Զ .

22. 23):

« Ով որ այս գործիներն մէջուն բուժուի մ յաւրա ջուր
իսցանե միայն աշտին բարձրակ անունով այս՝ իսպէմ յեղ է-ը
վարչել պիտի չորսնցանէ » : (Մատթ . Փ . 42) : Որով
սորվեցուց , թէ երկնքում գանձելիք գանձն ոսկի
և արծաթ կամ զգեստ չէ , այլ ողորմութիւն , որ
ամեն մարդու համար գիւրին է . մինչև անդամ մի
բաժակ ցուրտ ջուրն՝ գանձ է երկնքումն : Հոգովով
աղքատներն՝ լուսաւոր աչք կունենան , նոքա կտես-
նեն , որ աշխարհիս հարստութիւնը ոչինչ է , և թէ
մարդոյս պիտոյքներն ուտելիք և հագնելիք և իւր-
մելիք՝ Աստուծոյ խնամոց զօրութեամբ կպատրաս-
տուին ամեն մարդկան համար ամեն տարի և ամեն
ժամանակ . ըստ այսմ կտեսնեն և ողորմութեան
հնարաւորութիւնը : Այս մտքով աղքատներն աւե-
տարանելէն ետքն՝ կանցնի երրորդ հատուածի կա-
տարմանն՝ որ է ,

« Զի՞ երկեց , որ որդուենելուը բժշկեմ » :

Մարգարէն գուշակել էր , թէ Աստուծոյ օծեալն
որ գայ , պիտի բժշկէ հիւանդներին , որ գեռ ևս
Աստուծոյ հոգին չընդունած , տարածամ հիւան-
դացել են , և մահու ակնկալութեամբ սրտարեկ ե-
ղած : Մարգարէի այս գուշակութեան կատարումն
տուել էր արդէն Փրկիչն՝ Քալիլից միւս գեղերու-

մըն ու Կափառնաում քաղաքումն իրեն գիմող և
հաւատացող հիւանդներին բժշկելով . Փրկիչը կբժըշ-
կէր ոչ թէ գեղով կամ կերակրով այլ միայն բա-
նիւ . և բժշկեալներուն կպատուիրէր , որ այլ ևս
չմեղանչեն , այլ Աստուծոյ պատուիրած օրէնքները
պահեն : Որմէ կհետեի , թէ այն տարածամ հիւան-
դացեալներն՝ որ նոյն հիւանդութեամբ պիտի մեռ-
նէին , Աստուծոյ օրինաց սահմանած բարոյականին
հակառակ վարուելուն համար հիւանդացել էին :
Հիւանդները բժշկելով հանդերձ՝ չհիւանդանալ ևս
սորվեցուց , և ապա անցաւ չորրորդ հատուածին՝
որ է .

« Զի՞ երկեց , որ գերեներուն լուս-նիւն + արողեմ » :

Փրկչին յաշխարհ գալէն յառաջ՝ բոլոր ազգաց
մէջ՝ երեք դասակարգի կրաժանուէին մարդիկ . —
ազնուական , արշեստաւոր , և գերի : Ազնուական
դասակարգը՝ ոչ մի ծառայական գործ չէր գործեր ,
այլ միայն կվայելէր ինչ որ միւս երկու դասակարգն
կաշխատէր , այն ժամանակուայ դրութիւնն այնպէս
էր , որ արդիւնք արտադրող երկիրներն այս դասա-
կարգին միայն կպատկանէին . Արշեստաւոր դասա-
կարգը կաշխատէր վարձով և կապրէր իւր քրտին-
քով : Գերիներու դասակարգն՝ որևիցէ իրաւունք
չունէր . գերին պարտական էր իւր տիրով հրամա-
նաւն աշխատել նորա երկիրները գործել և արդիւն-
քը նորա ամբարները ժողովել : Գերին մինչև ան-
գամ կամք չունէր . իւր տիրոջ հրամանաւ պիտի ա-

մուսնանար, և նորա համար գերիներ պիտի ծնանէր, Գերին տիրոջ կամքով մինչեւ անդամ կվաճառուէր, անասունի հաւասար էր. Ամեն աղքաց մէջ կար այս դրութիւնը. միայն Հրէից մէջ՝ ըստ օրինաց արգելուած էր հրեայ գերին, և այլազի գերին ևս աղատ կարձակուէր թողութեան տարիներում:

Փրկիչն, այս դրութեան հակառակ՝ գերեաց աղատութիւն և իրաւանց հաւասարութիւն քարոզեց, և մարգարէութեան կատարումն տուաւ նաղարէթի ժողովարանէն սկսելով. Մինչեւ ներկայ դարու կեսերումն արդի քրիստոնեայ տէրութեանց մէջ ևս գերութիւնը թշոյլատրուած էր, բայց դարուս վերջին կէսումն իսպառ արգելուեցաւ, և այժմ ոչ մի քրիստոնեայ տէրութեան մէջ չկայ գերիներու դասակարգ, և Փրկչին սորվեցուցած բարոյականին համեմատ՝ որ կասէր.

« Դու+ ամեն+դ Եղբայրներ է+ »:

այժմու քրիստոնեայ աղքաց մէջ ամեն մարդ իւր աշխատանքով կապրի:

Տէրն մեր՝ մարգարէութեան այս հատուածն ևս կատարելով կանցնի չորրորդ հատուածին՝ որ է.

« Զի՞ իրէց, որ իշտեռա՞ն աւենել + արողվէ՞ :

Փրկիչն իրեն քարոզութեանց միջոցին փարիսեցոց օրինազանցութիւններն յանդիմանելով իշտ կանուանէ և փոքրէցներն և հրէց առաջնորդներն. որմէ կհետեւի, թէ մարգարէի այս դուշակութեան

մէջ յիշուած կոյրելն՝ մարմնոյ աչքով կոյրերն չեն, այլ մանաւանդ այն մարդիկ, որ Աստուծոյ հոգին և նորա լոյսը չունեն, ու աստուածային զօրութիւններն չեն տեսներ: Այսպիսիներուն քարոզեց Փլրկիչն, և յայտնեց Աստուծոյ լոյսն, հոգւոյ աչքն, որ մթութեան մէջ ևս կտեսնէ: Աստուծոյ հոգւոյն և լուսոյն հաղորդ եղող մարդն՝ Աստուծոյ թագաւորութիւնը կտեսնէ. այն թագաւորութեան մէջ աճեցող յաւիտենական կեանքն ևս կտեսնէ, և ամենայն սրտով կսիրէ այն արքայութեան մէջ ապրել՝ քան թէ այս աշխարհի փառքերումն ու անրել, քան թէ այս աշխարհի փառքերումն ապրել՝ Քրիստոսի Տեառն մերս քարոզած հոգին և տեսութիւնն ունեցող մարդն կտեսնէ, որ Աստուծոյ արքայութիւնն ամենախնամ է. այն տեղ ծառայի և աղատի խտիր չկայ, ամենքն ալ ժառանգ են և որդիք, ամենքն ալ աղատ են, ամենքն ալ հաւասար են, միւնցն իրաւունքն ու պարտիքն ունին. սէր և խաղաղութիւն՝ ամենքին միապէս կտիրէ. այնտեղ ամեն ոք կը հոգայ ընկերին համար, անձին համար հոգացող չկայ, Աստուծոյ սէրը կթագաւորէ ընդհանուր. այնտեղ չկայ մեղք և յանցանք, այլ իմաստութիւն արդարութիւն, սրբութիւն և ընկերսիրութիւն:

Եթէ մարդու հոգին հաղորդուի մի անդամ Աստուծոյ լուսոյն և արքայութեան նա այլ ևս չկարողանար բաժնուել այն արքայութեան հաղորդութենէն. ոչ ոք և ոչինչ չեն կարող բաժնել այնպի-

սին՝ ի սիրոյն Քրիստոսի, ո՞չ նեղութիւն ու տառապանք, և ո՞չ աշխարհիս արդի փառքն ու իշխանութիւնն, և ո՞չ այսուհետեւ աւելնալիք փառքերն:

«Կուրոց գեղութեան ժարողելու» պաշտօնը կատարեց Յիսուս՝ այս տեսութիւնը քարոզելով աշխարհասէր մարդկան ականջին, որ սատանայի փորձութիւններումն բռնուած և կուրացած, մեծ տառապանքերու տակ կճնշուէին. հացի, փառքի և մեծութեան հոգսերու տակ կճնշուէին. գողերէ, զրկողներէ և սպանողներէ ապահովուելու մեծամեծ հոգսերու տակ կը ճնշուէին. իրենց ցանկութեանցն համար մեղաց օրէնքներու կապաւինէին, և նոյն մեղաց ներքեւ ճնշուած կմեռնէին:

Այսպէս լուսաւորելով բարոյապէս և հոգեպէս կուրացեալներն, անտես չարաւ և մարմնով կոյրերն, այլ նոցա ևս մարմնական աչքերն բացաւ և հոգիներն լուսաւորեց, ինչպէս որ ի ճնէ կոյրին համար կվկայէ Յիսուս.

«Դաստիարակ անելու համար յաշխարհ եէայ, որ չորեանոցնեն աւեսնէն, իսկ աւեսնոշնեն իսւրանան»: (Յովէ. թ. 39):

Այսպէս վկայեց, ըստ որում կոյրն՝ որ բացուեցաւ՝ հաւատաց ի Քրիստոս, իսկ փարիսեցիքն՝ որ կտեսնէին՝ չհաւատացին, և կջանային, որ սուր հան կուրին բժշկութիւնը: Այսպէս թէ հոգւոյ և

թէ մարմնոյ կուրութիւնը պիտի լուսաւորէր Փըրկիչն ըստ գուշակութեանն Եսայի մարդարկին, որոյ կատարումն տալով իւր քարոզութեամբն՝ անցաւ վեցերորդ հատուածին կատարման, որէ.

«Զի՞ իւրէց, ո՞ր վերաբերեն է նույն-իւն-արյակի՞մ»:
Մարդարէութեան այս հատուածումն վերաբեր կոչուածներն այն կարգի մարդիկն են, որ իրենց ընկերին աղքատացուցել են, հիւանդացուցել են, գերել են, կուրացուցել են. այս մարդիկն են աշխարհի սիրովը վառուած և կուրացած ագահներն, որոնք որ և իցէ զրկանք խնայած չեն իրենց ընկերներուն. այս մարդիկն՝ այնպէս բռնուած են և կապուած ու կաշկանտուած սատանայի փորձանքներումն, որ իրենց վախճանինունայնութիւնն զգալով հանդերձ, չեն կարողանար այն կապանքներէն արձակուել: Այսպիսիներուն ևս թողութիւն գտնելու ճանապարհը սորվեցուց Փրկիչն, և իրենց վիրաւորող կապանքներէն արձակեց, որոյ օրինակն կերեւի Զաքէոսի ապաշխարութեան վերայ, որ Տիրոջ խօսքերը լսելէն ետքն՝ ասաց.

«Տէր, ահուառիկ առաջանձէն էնը ողութառոց կուրամ»:
և էրէ մէկը շրէեւ եմ, չորեանութիւն էնուրացնեն»:
(Առէկ. ԺԹ. 8):

Այս Զաքէոս մաքսապէտ էր և աշխարհի հարստութեան սիրով կապուած, և կզրկէր իւր ձեռքըն ինկած մարդիկներն. Սորա այս ապաշխարութիւնն ընդունեց Յիսուս, և իսկըն ասաց.

« Այսօք իրիսութեան եղաւ այս դանը . ժանչի առ ևս Աքրահամու որդի էր : Զի որդին արդիոյ եկամ, որ իրաւուելունը էնդուե, և ազրեցանէ » : (անդ. 9. 10) :

Յիսուս իւր բոլոր քարոզներումն մեղաւորաց թողութիւնն կվարդագետէր . մինչև իսկ խաչին վերայ աջակողմեան աւազակին ապաշխարութիւն ընդունեց, և վճռեց ի թողութիւն :

« Այսօք ինչ հետ պէտի լինի՞ն դրախումն » : (Ղու. ԻՊ. 43) :

Այս իմաստով խօսեցաւ Փրկիչն և մեղաւորաց թողութեան կատարման մասին, և անցաւ մարգարէութեան եօթներորդ հատուածին, որ է :

« Զի՞ն երից, որ Տէրոջ ընդունելէ ուսքէկանը + ուրողիւմ » :

Տիրոջ ընդունելի տարեկանն հասկանալու համար պէտք է նախ կարդալ հին ուխտի արեան խօստումն, որուն ի նշան սահմանեց Աստուած խորայէլի թողութեան տարեկանն որ Տէրոջ ընդունելէ ուստեկանին ստուերն էր, և որ ամեն տարի կկատարուէր : Մովսէս մարգարէն հին օրինաց սկզբումն այսպէս կսահմանէ ուխտին արիւնը :

« Ես մդու Մովսէս, և ժաղվուրդին պատմեց Տէրոջ տմէն պատրիառներն առ ամէն իրաւունեներն : Բոլոր ժաղվուրդը միայն պատրիառն առան, և առողին . Ամէն պատրիառներն՝ զրոյ խօսեցաւ Տէրը՝ իսկեն+ և իւրիւն+ :

« Ես Մովսէս Տէրոջ ամէն պատրիառները էրից : Ես առաջաւ իսկուսի եւստ Մովսէս, լւաւու սոսորումն ան զնից : և առաջաւ իսկուսի իւրու Տէրոջ, և առաջաւ իսկուսի իւրու Տէրոջ ամէն պատրիառներն առ ամէն զնից :

Ներկու ակներս իսուսումն :

« Ես իսրայէլի երեսունորդները երից, և ազգակեներ հանեցն (սեղանին վերայ), և իրիս-թեան ընհեր մասուցին Ուսպութոյ՝ հարլեր : Ես Մովսէս արիւնին իւս առաջաւ իսկուսի առաջաւ լիցուաց, և իւրու ուղանին առաջը նորիւց :

Ես սեփակ իւրու առաջ, ժաղվուրդին ախնչին իսրայէս : և առաջնին . ամէն, ինչ որ Տէրը իսկուսի հանեն+ և իւրու+ :

Ես Մովսէս արիւնն առաջ, և ժաղվուրդին վերայ ցանեց, « ասաց, Ահա այս արիւնն՝ այս սեփակ արիւնն է, զբ Տէրն սեփակ յեղի հետ այս ամէն պատրիառներուն համար : (Ելք. ԻՊ. 3—8) :

Այս նկարագրումն՝ ինչպէս կերևի՝ իսրայէլի ժողովուրդն՝ հին ուխտի օրէնքն ընդունած ժամանակն երկու անգամ խօստացաւ, թէ ամեն պատրիառներն ինչ որ Տէրը խօսեցաւ՝ կանենք և կլսենք . և Մովսէսի սրսկած արիւնն իրենց վերայ ընդունեցին . որով ուխտած եղան—եթէ Տիրոջ ամեն պատրիառներն՝ ինչ որ խօսեցաւ՝ չանենք և չլսենք, արեան պարտական ենք :

Աստուած՝ ժողովրդեան այս խօստան համեմատ նոցա քաւութեան տարեկանը սահմանեց . (Ղետ. ԺԶ.) որոյ վերջումն այսպէս կկրկնէ :

« Ես այս (առեւկան) յաւեկունական օրէն+ լինի յեղայէլի որդուաց հաւատը՝ նոցա ամէն մշտերէն + առաջնիւն+ անելու : Տարին մի անդամ պիտի իսրայէրուք . ինչոյն որ

Տէրն հրամայեց Ասվածէն »։ (Պ.Ա. Ժ. 34)։

Հին ուխտի օրինաց այս տարեկան քաւութիւնն կկատարուէր ըստ այսմ։

Քահանայապետն իւր մեղաց քաւութեան համար մի զուարակ կատարաստէր ողջակէզ անելու. ժողովուրդէն ալ երկու նոխազ կառնէր. և վիճակով կընտրէր մինն արձակելու և միւսն Տիրոջն ողջակէզ։ Տիրոջը վիճակուած նոխազին վերայ ողջակէզի օրէնքներն կատարել պատրաստելէ ետքն, քահանայապետը՝ իւր ձեռքերը կդնէր արձակելիք նոխազին վերայ, և ժողովրդեան «ամեն անիրաւութիւններն, անօրէնութիւններն ու մեղքերն կխոստովանէր»։ և պատրաստի կեցած մի մարդու կյանձնէր, որ այն նոխազը վարէր գէպի անկոփ անապատ։ Եւ ապա բանակէն դուրսը՝ ողջակէզը կայրէին ժողովրդեան քաւութեան համար, որոյ արիւնն արդէն սրսկած կլինէր քահանայապետն՝ Աստուծոյ սեղանին վերայ՝ ըստ օրինի։ Այսպէս էր իսրայէլի որդւոց տարեկոր քաւութեան արարողութիւնն. «Ի որուէկն կասուէ՝ ըստ որում տարին մի անդամ միայն կկատարուէր։

Այս ուխտի արեան փոխանակ կատարուած տարեկաններն բուն տարեկանին՝ այսինքն նոր ուխտի տարեկանին ստուերներն էին. որոց վախճանումն պիտի կատարուէր բուն իսկ տարեկանն, զոր Տէրջ ընդունէւէ որուէկն կանուանէ մարդարէն, ընդունելի տարեկանն ինքն Օծեալ Փրկիչն էր, որ իւր արիւնը

թափեց իրբու նոր ուխտ, փոխանակ հին ուխտի նոխազի արիւնին, զոր ուխտել էին իսրայէլի որդիք հին օրէնքն ընդունելու միջոցին։

Քրիստոսի Տեառն մերոյ խաչելութիւնն, մաշն՝ հին օրէնքումն սահմանուած քաւութեան տարեկան ողջակէզի կատարումն էր. և որ Աստուծոյ ընդունելի տարեկանն էր, որ Թաղման երրորդ օրն յարութիւն առաւ, և մեռելոց յարութեան հոգւոյ անմահութեան և յաւիտենական կենաց հաւատքն հաստատեց քրիստոնէից սրտերումն։ Ըստ այսմ Տէրն մե՛՝ և այն անմահ կենաց ձանապարհ բացող Գառն Աստուծոյ՝ քարոզեց հոգւոյն կեանքն ու անմահութիւնն։

Եւ այսպէս մարդարէին գուշակած ընդունելի տարեկանին կատարումն ևս քարոզելով, վերջացուց իւր խօսքն ու ասաց. «Ո.յուզ այս չեր+ը կարուրուէցու յէր այսունակութ»։

« 22. Եւ ամէն+ը կիւյլէն նմա, և նորո բերնէն ելած շնորհալից իւսոււրուն վլրոյ իշորհանային, ու իսուէին. Յուկէէ ուրուն չէ՞ ո՞»։

Փրկչին շնորհաց խօսքերն լսող և վկայող նազարեթացիներն, թէպէտ կվկայեն նորա ձշմարիտ խօսածին, բայց իսկոյն կդառնան իրենց մարմնական հայեցուածին, և մէկմէկու կհարցնեն, թէ Յովսէփի որդին չէ՞ սա. Այս ծանօթութիւնը ըռնեցող ժողովուրդներն այսպէս դիւրաւ չէին դառնար գէպի մարմնական ծանօթութիւններն, այլ փառք կու-

տային Աստուծոյ խնամոցն, որ այնպիսի մարդարէ
և փրկիչ յարուցել է իրենց:

« 25. Եւ առաջ նոյն. ճշմբրդիւ առելու է + ինչ այս ա-
ռաջին, բժշկի բժշկի զիւղ, որչոք լրէցին + որ կադառ-
նառաօք մէջ որէր, այս ուել +» բառառառաջն աւ որո՞ » :

Ըստ որում նազարէթի ժողովուրդն Աստուծոյ
խօսքը լսեց և Աստուծոյ փառք չտուաւ, և սկսեց
իրեւ թէ Յովսէփի որդւոյն մասին խօսել՝ կյայտնէ
նոցա Յիսուս, թէ այս առակն ասելու իրաւունք
ունին, ըստ որում նազարէթում պիտի չգործէր այն
պրանչելիքներն ինչ որ գործել էր Կափառնառում
քաղաքում։ Որոյ պատճառն այսպէս կյաւելու.

« 24. Եւ առաջ. ճշմբրդիւ իսուս յեւ ինէ առբժորէն իւր
ժողուունքն ընդունելս չե։ 25. Արդարւ իսուս յեւ
եղիսոյի օրերուն երբ որ երեւ որոքի և վեց անու եր-
ինեւը ժողուունքն, և բարոր երեւն երեսը մէջ անվ եղաւ,
երրոյնիւ մէջ և շատ այբներ իսոյն, 26. Բայց նոյն
ու մէջն մերինունքու երեւ, այլ Սիդոնոյուց Սորեւ-
նայունքն մէ այբէ ինոչ մօտ երիւնեցու։ 27. Եւ ե-
ղիսէ մարդուրէի ժողուունքն աւ իսրոյնիւ մէջ շատ բո-
րուունէր իսոյն, և անոնցմէ ու ու շրբունքու։ Բայց
միայն նեւեն առոքին » :

Ինչպէս որ Եղիայի ժամանակ իսրայէլի շատ այ-
րիներէն ոչ մին այնպիսի հաւատք չունէր, ինչ որ
ունէր Սիդոնացոց Սարեփթայումն մի այրի, որոյ
տան բարիկն աննուազ արաւ Եղիա սովի տարինե-
րումն, այնպէս ալ նազարէթիմէջ հաւատք չդտաւ

Յիսուս. Միւևնոյն կերպով համեմատելով և Եղիսէ
մարդարէի սրբած ասորի բորոտին դէպքն, կվճռէ
Փրկիչն, թէ մարդարէն իւր գաւառումն պատիւ
չունի. որով և կյանդիմանէն նազարէթացւոց ան-
հաւատութիւնն».

« 28. Եւ ժողունքանունքն ամէնն աւ բորբութեամբ լի-
ցաւցուն երբ ու յանդիմանութիւնը իւրէն։ 29. Եւ
ուր ելուն, և առաջ+էն դուրս հանեցին զնո. և առաջն
զնո մինչ լեռան ժահը՝ որոյ վերոյ նոյն առաջ+ը լի-
նառաջ եր՝ որ վայր լին դուն» :

Նազարէթի ժողովուրդը՝ Աստուծոյ հոգին չու-
նէր, բայց մարմնասէր մարդկան սովորական փա-
ռասիրութիւնն ունէր. որով և զայրացան Յիսուսի
յանդիմանութեան վերայ, որով նոցա անհաւատու-
թիւնը կյամեմատէր Եղիայ և Եղիսէ մարդարէնե-
րու ժամանակակից իսրայէլացւոց այրիներուն և բո-
րուներուն անհաւատութեանը։ Այնչափ սաստիկ
բարկացան, որ զՅիսուս գահավէժ սպանելու ելան։
Այսպէս է աշխարհիս ոգին. որ չճանաչեր իւր բա-
րիքն».

« 30. Եւ նո (Յիսուս) նոյն մէջն անցած իւնոք».

Փրկիչն՝ ըստ որում իւր ժամանակը լրացած չէր՝
յանձնուեցաւ բարկացած ժողովրդեան ձեռքը, որ
մինչև լեռան զլուխն հանցին, և ապա իւր աստ-
ուածային զօրութեամբն անցաւ նոցա մէջէն, և կեր-

թար, և նաղարէթացիք կնայէին, ի հարկէ ապշեցան այս անցքին վերայ՝ բայց ըստ որում հոգւով կուրացած էին, չճանաչեցին զՔրիստոս:

Ահաւասիկ սուրբ Աւետարանի խօսքը կարդացի ձեր ականջին. Քրիստոսի Տեառն մերոյ՝ սատանայի փորձութիւններումն կատարած յաղթանակն, և նոցա մէջ սորվեցուցած բարյական իմաստներն պարզեցի. նոյնպէս Նաղարէթի ժողովարանումն մեկնաբանած մարդարէութեան եօթն հատուածներու մերձաւոր իմաստն ևս պարզեցի, և դուք լութեամբ և մոտադրութեամբ ունկնդիր եղաք. Մաղթենք Աստուծմէ, որ լւր հոգւոյն շնորհան և մեր մէջ զարթեցնէ, և տեսնենք Աստուծոյ պատուիրանաց լոյսն, միսիթարուենք մեր աղքատութեան մէջ՝ Աստուծոյ հոգւոյն հաղորդութեամբն հարըստացած. բժշկուենք մեր հիւանդութիւններէն, ազատուենք մեղաց գերութենէն. լուսաւորուենք և հոգւոյ և մարմնոյ կորութենէն. արձակուենք ընչասիրութեան և անձնասիրութեան կապանքներէն, Ճշմարիտ հաւատքով աներկմիտ յուսով և կատարեալ սիրով փարենք Քրիստոսի խաչին, և հետևենք նորա բացած կենաց ճանապարհին. Որուն արժանի անէ Աստուծած ամենքիս:

ոճ անուան անաման ոճ նազա առ նշանա
գո ազգան մանրին. — ացածքայ ացածանեան,
առա զայ առա և միջման մեջ առա ացած
ոճ ա ացած ացած ացած միջման մեջ միջման

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Շամակուոյ թեմի հայ ժողովուրդներուն, որոնց որ արդէն տեսնել եմ, և որոնց որ գեռ ևս պիտի տեսնեմ:

Հայեր, օրհնութեան որդիներ.

Ձեր հոգեկան վիճակն ու բաղձանքն արդէն յայտնի եղած է Հայաստանեայց սուրբ եկեղեցւց բարձրագոյն Հոգեկոր իշխանութեան, թէ ինչ եռանդով կփափագիք լսել Աստուծոյ խօսքն, սուրբ աւետարանի Ճշմարտութիւններն ու կենաց պատգամն. և թէ կցանկանայիք քարոզիչ ունենալ, որ շրջի ձեր մէջ, և շարունակ քարոզէ ուսուցանելով:

Քարձրագոյն Հոգեկոր իշխանութիւնն՝ ձեր այս արդար և բարեպաշտ ցանկութիւնն կատարելու համար, զիս նշանակել է քարոզիչ, որ շրջեմ ձեր մէջ, և ձեր ծարաւն յագեցնեմ սուրբ Աւետարանի կենաց աղբիւրէն:

Աստուծոյ շնորհացն ապաւինած՝ որ միշտ տկարները կզօրացնէ, յօժարութեամբ փութացայ այս պաշտօնին, և սկսեցի շրջագայել. Այժմն տեսնելով ձեր բնակութեանց հեռաւորութիւններն, և զգալով թէ տարին մի անդամ ալ պիտի չհասնեմ պատահէլ ամեն մի ժողովրդի, կարեոր համարեցայ և գրաւոր ընթերցուածներ տալ Զեղ նոյն իսկ սուրբ Աւետարանի խօսքերէն, ինչ որ կիսուեմ

զ սնազան էկեղեցիներում, Արպէս զի իմ բացա-
կայութեան ժամանակն ևս ձեր սովորական ըն-
թերցասիրութեամբն կարդայք, կրկնէք, չհասկա-
ցածնիք հարցնէք, և սովորէք: Այսպիսի ընթեր-
ցուածներ՝ կաշխատեմ, որ միմեանց ետևէ հաց-
նեմ Չեզ և գուք ընթերցասիրութեամբ միկթա-
րութիւն գտնէք:

Իմ ջանից փոխանակ մի լինդիր միայն ունիմ,
և կինդրեմ ձեզմէ, որ Շշմարիտ աստուածապաշտի
միամտութեամբ կարդայք Աստուծոյ փրկութեան
Աւետարանի խօսքերն, և փոյթ ունենայք, որ հար-
ցասիրութեամբ սովորիք: Ինչ որ չհասկանայք,
հարցուցէք ձեր ընկերներուն մէջ գտնուած հաս-
կացողներէն—հայրերնէդ, եղբայրներնէդ, նոյնպէս
և ինձմէն, երբ ձեր մէջ գտնուեմ:

Կմաղթեմ, որ Աստուած իմաստութիւն տայ ձեզ
իւր հոգիէնց և հետզետէ իմաստուն և կատարեալ
լինիք սուրբ Էւետարանի սորվեցուցած մարդկային
Շշմարիտ բարոյականումն:



1075

0028086

1076

ՀՀ Ազգային գրադարան



NL0028096

